ՄԱՅՐ ԱԹՈՌ

Հունվարի 1-ին Ամանորի առթիվ Մայր Տաճարում Ս. Պատարագից հետո կատարվեց Հայրապետական հանդիսավոր մաղթանք Վեհափառ Հայրապետի ներկայությամբ։ Ս. Պատարագից հետո Մայր Աթոռի միաբանությունը ներկայացավ Վեհափառ Հայրապետին իր շնորհավորանքը մատուցելու Նոր տարվա առթիվ։

***

Հունվարի 6-ին, Ս. Ծննդյան տոնի օրը, Մայր Տաճարում Ս. Պատարագ մատուցվեց և ժողովրդի հոծ բազմության ներկայությամբ կատարվեց ջրօրհնյաց հանդեսի արարողությունը։ Տաճարում ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Ամանորի և Ս. Ծննդյան տոնի առթիվ Վեհափառ Հայրապետի անունով շնորհավորական հեռագրեր են ստացվել Տանն Կիլիկիո Շնորհազարդ Կաթողիկոսից, Երուսաղեմի Պատրիարքից, Պոլսի Պատրիարքի Տեղապահից, ՍՍՌ Միության և արտաքին գործերի Առաջնորդներից ու բազմաթիվ հավատացյալներից։

***

Ս. Վարդանանց զորավարաց և 1036 վկայից տոնի օրը Մայր Տաճարում Ս. Պատարագ մատուցվեց և հոգեհանգիստ կատարվեց աղի ու հավատի համար նահատակվածների հիշատակին։

Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Ս. Վարդանանց տոնի օրը Էջմիածնի Հոգևոր ճեմարանում տեղի ունեցավ գրական-գեղարվեստական երեկույթ։ Օրվա նյութի շուրջը բանախոսեց ճեմարանի դասատու Ա. Դիլոյանը։ Արտասանություններով հանդես եկան ուսանողները։ Հաջող ելույթ ունեցավ Իրանից ներգաղթած պատանի ջութակահար Առաքելյանը։ Հանդեսի վերջում Տ. Նիկողայոս քհն. Բավեյանի ղեկավարությամբ երգեցիկ խումբը կատարեց Հայկական հիմնը։

Երեկույթին ներկա էին Հոգևոր ճեմարանի դասատվական կազմը, վանքի միաբանությունը և հյուրեր։

***

Շիկագոյի Հայաստանյայց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվո հոգևոր հովիվ Վահրամ ծ. վրդ. Նազարեթյանը և հոգաբարձության ատենապետ Խ. Ճերանյանը, ատենադպիր Վ. Միքայելյանը ու գանձապահ Մ. Մանվելյանը Ամանորի և Ս. Ծննդյան տոնի առթիվ Վեհափառ Հայրապետի անունով իրենց հղած շնորհավորական գրությամբ միաժամանակ հայտնում են, որ եկեղեցին ներգաղթի սուրբ ու վսեմ գործին տրամադրել է հինգ հարյուր տալեր։

***

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ. Հայրապետական կոնդակով, տրված 1946 թ. 7 դեկտեմբերի, իր գոհունակությունն է հայտնել «Ս. Էջմիածնի Հիմնադրամի Լոնդոնի Կեդրոնական Հանձնաժողով»-ին և շնորհել, երկար տարիների բարեխիղճ աշխա-

տանքի համար, նույն Հանձնաժողովի նախագահ Տ. Կարապետ Տիլպերին Ս. Լուսավորչի Ա կարգի ադամանդազարդ շքանշան։

***

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Զ Հայրապետական կոնդակով, տրված 1946 թ. 7 դեկտեմբերի, իր գոհունակությունն է հայտնել «Ս. Էջմիածնի Հիմնադրամի Լոնդոնի Կեդրոնական Հանձնաժողովի Գործադիր Մարմին»-ին և շնորհել Գործադիր Մարմնի նախագահ Տ. Հ. Մելքումին Ս. Լուսավորչի Ա կարգի ադամանդազարդ շքանշան, ի տրիտուր նրա երկար տարիների բարեխիղճ գործունեության։

Պ-ՐՆ Բ. ԲԱՔԱԼՅԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Սիրիայի հայ հասարակական գործիչ պ-րն Բ. Բաքալյանը, հայրենիք՝ Սովետական Հայաստան ժամանելով, երկիցս այցելեց Մայր Աթոռ ու երկիցս էլ արժանացավ Ամենայն Հայոց Հայրապետի սիրալիր ընդունելությանը.

Վերադարձը, բարձր գնահատելով պ-րն Բ. Բաքալյանի հասարակական ազգօգուտ գործունեությունը՝ հատկապես ներգաղթի մարզում, Հայրապետական կոնդակով շնորհեց նրան Ս. Լուսավորչի Ա կարգի ադամանդազարդ շքանշան։

Պ-րն Բ. Բաքալյանի անվամբ տրված կոնդակում Ամենայն Հայոց Հայրապետը հետևյալ տողերն է արձանագրում ներգաղթի մասին.—

«Ներգաղթը ներկա Հայ կյանքի խոշորագույն երևույթներից գլխավորն է. նա մեր անցյալ թշուառ կյանքի անվի թեքումն է դեպի բախտավոր կյանքը. նա ազգահավաքման սկիզբն է դնում հայրենի երկրում, որը պիտի նպաստե Հայ ժողովրդի աճման, զորացման և նրա կուլտուրական վերելքին, նաև պիտի ծառայե նորա արդար դատի իրացման։ Յուրաքանչյուր հայ ազգասեր և հայրենասեր մարդու բնական ու բարոյական պարտքն է նպաստել այդ ազգաշեն շարժմանը»։

Բ. Բաքալյան